Աղբերք

Բնակչության թիվը՝ 319

Աղբերք բնակավայրը գտնվում է Սևանա լճի արևելյան ափին՝ Սևան- Ճամբարակ /Մ14/ ավտոմայրուղու և Երևան- Վարդենիս երկաթգծի մոտ: Այն հարակից է ՝Սևան՝ Ազգային պարկին: Տեղակայված է 2100-2200մ բացարձակ նիշերով տեղանքի վրա, որն ունի ընդհանուր հարավ-արևմտյան թեքվածություն դեպի Սևանա լիճը: Մինչև Խորհրդային Միության անկումը գյուղը բնակեցված է եղել ադրբեջանցիներով:
Այժմ գյուղի բնակիչների հիմնական մասը Ադրբեջանից գաղթած հայերն են:

՝Աղբերք՝ անունը առաջացել է համայնքի տարածքում գտնվող բազմաթիվ սառնորակ աղբյուրների առկայության շնորհիվ:
Տարածքը 3945,34 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 366 2,32 հա, բնակավայրի հողեր՝ 98,68 հա (բնակելի՝ 52,19 հա):
Աղբերքի տարածքի կլիման բարեխառն է, եղանակը արևոտ, փոքր խոնավությամբ : Ունի միջնակարգ դպրոց:
Բնակչությունը զբաղվում է հիմնականում անասնապահությամբ: